ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

1 ի մարտի 1995 թ. Հ. 10-Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսության ոլորտում Հայաստանի ամերիկյան համալսարանի /ՀԱՀ/ շրջանավարտներին ընդգրկելու, նրանց հնարավորությունները և կարողությունները առավել արդյունավետ օգտագործելու նպատակով և նկատի առնելով, որ կրթական ծախսերը կատարված են ի շահ Հայաստանի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Մ. Քուշակճեան - Հանձնաժողովի համանախագահ, ՀԱՀ պրոռեկտոր
Ծ. Ավագյան - Հանձնաժողովի համանախագահ, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության (ՀՀ ԲԿԳ) նախարարության արտաքին կապերի վարչության պետ
Ժ. Պետրոսյան - ՀՀ ԲԿԳ նախարարության բարձրագույն կրթության վարչության պետ
Ա. Սարգսյան - ՀՀ ԲԿԳ նախարարության գիտության վարչության պետ
Մ. Ալահայդոյան - ՀԱՀ պրոֆեսոր, իրավաբան
Մ. Քոնրադ - ՀԱՀ պրոֆեսոր, ուսումնական հարցերով բաժնի վարիչ

2.1 Սկսած 1995թ.-ից ՀԱՀ-ի ուսանողների և ՀՀ ԲԿԳ նախարարության միջև պարտադիր ձևով կնքել երկկողմանի համաձայնագիր, ըստ որի համալսարանը ավարտելուց հետո շրջանավարտները առնվազն երեք տարի պարտավոր են աշխատել Հայաստանի Հանրապետության տարածքի հիմնարկություններում, ձեռնարկություններում՝ ստացած մասնագիտությանը համապատասխան:

2.2 Հանձնաժողովը ՀԱՀ-ի շրջանավարտներին պարտավոր է տեղեկացնելու Հայաստանում աշխատանքի հնարավորությունների մասին: Հանձնաժողովը իր

գումարած նիստերում պետք է հրավիրի Հայաստանի տարբեր նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչներին, առաջարկելով ՀԱՀ-ի շրջանավարտների ցուցակները և կազմակերպելով հանդիպումներ ուսանողների հետ:

3.1 ՀԱՀ-ի այն շրջանավարտները, որոնք կհրաժարվեն աշխատանքի անցնել Հայաստանի Հանրապետությունում կամ կհեռանան Հայաստանի Հանրապետության տարածքից, պարտավոր են ՀԱՀ-ին վճարել ուսումնառության հետ կապված երկու տարվա բոլոր ծախսերը՝ որը 1994 -1995թ. կազմում է 12000 ամերիկյան դոլար և որը կարող է փոփոխության ենթարկվել ապագայում:

3.2 ՀԱՀ-ի այն շրջանավարտները, որոնք հետագայում կզինակոչվեն, զինծառայության ժամանակաշրջանը հաշվի կառնվի այդ երեք տարիների մեջ:

3.3 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները, հղի և մինչև 3 տարեկան երեխա ունեցող կանայք, եթե նրանք չեն մեկնում Հայաստանի Հանրապետության տարածքից, ինչպես նաև արտասահմանյան երկրների քաղաքացիները ազատ են սույն կարգադրության պահանջներից:

3.4 Այն շրջանավարտները, որոնք ՀԱՀ-ի հատուկ հանձնաժողովի կողմից կուղարկվեն դոկտորանտուրայում սովորելու, ենթակա չեն աշխատանքի նշանակման մինչև ուսումնառության ավարտը: Դոկտորանտուրան ավարտելուց հետո, նրանց հանդեպ կիրառվում են սույն հրամանի 2.1 և 3.1 կետերը, ներառյալ դոկտորանտուրայում ուսումնառության հետ կապված ծախսերը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել ՀՀ ԲԿԳ նախարարության արտաքին կապերի վարչության վրա, որը կստանա ՀԱՀ-ի տնօրինության աջակցությունը:

5. Նախարարության իրավաբանական Պարգսյանին՝ մինչև 1995 թվականի փետրվարի 28-ը, ՀԱՀ-ի պրոֆեսոր, հրավիրյալ Մ. Ալահայդոյանի հետ համատեղ, մշակել համալսարան ընդունվող ուսանողների համաձայնագրի օրինակելի ձև և այն գործողության մեջ դնել 1995թ. մարտի 13-ից:

Նախարար՝ Կ. Գնունի

Կ.Գնունի